

**«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ  
ՈՉ ԱՌԵՎԱՏՐԱՑԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

«Հաստատում եմ»

**ՎՊՄԻ-ի ռեկտոր**

\_\_\_\_\_ Խաչատրյան Գ. Կ.

« 20 » 09 2012թ.

**Կարգ**

**«Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ»**

**Պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժության ֆակուլտետի**

**դասախոսական կազմի պաշտոնների տեղակալան**

Ընդունվել է՝ ՎՊՄԻ գիտխորհրդում  
(արձանագրություն թիվ 8\_“20\_”\_09 \_\_\_\_\_ 2012 թ.)

## **1. Ընդհանուր դրույթներ**

1.1 Սույնով սահմանվում է «Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Ինստիտուտ) մանկավարժության ֆակուլտետի (այսուհետ՝ Ֆակուլտետ) դասախոսական կազմի պաշտոնների տեղակալման կարգը:

1.2 Սույն կարգի իրավական հիմքն են ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, ՀՀ «Կրթության մասին օրենքը», ՀՀ «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենքը», Ինստիտուտի կանոնադրությունը և «Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժության ֆակուլտետի դասախոսական կազմի պաշտոնների տեղակալման կարգը :

## **2. Ֆակուլտետի գիտառուսումնամեթոդական խորհրդում ընտրվող դասախոսական կազմի տարակարգը**

- 2.1 Ֆակուլտետի գիտառուսումնամեթոդական խորհրդում ընտրվում է միայն **Դասախոս տարակարգը**:
- 2.2 **Դասախոս տարակարգի** աշխատանքների բնութագրերը.

- հանրակրթական առարկաների դասավանդում,
- դասախոսությունների, գործնական, լաբորատոր և սեմինար պարապմունքների անցկացում,
- կրթական ծրագրերով նախատեսված նոր մասնագիտությունների, դասընթացների պատրաստում և իրականացում
- մասնագիտական առարկաներից կուրսային աշխատանքների և նախագծերի ղեկավարում,
- պրակտիկաների ղեկավարում,
- հետազոտական աշխատանքների իրականացում,
- ղեկուցումներ գիտաժողովներում:

### **ՀԱՄԱՏԵՂՈՂ ԴԱՍԱԽՈՍՈՒ**

Ֆակուլտետի **Դասախոս** տարակարգում համատեղությամբ, որոշակի դրույթաշափով և որոշակի ժամկետով, դասախոսի պաշտոն կարող են գրանցնել ինստիտուտի կամ այլ բուհի, ինչպես նաև հետազոտական, գիտաարտադրական հաստատությունների և այլ կազմակերպությունների աշխատակիցներ:

## **3. Պաշտոնի տեղակալումը**

Դասախոսի պաշտոնին կարող են հավակնել.

- գիտական աստիճան կամ գիտական կոչում ունեցող անձինք
- ասպիրանտուրայում սովորող անձինք ,
- մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող անձինք :

## **4. Դասախոսական կազմի պաշտոնի տեղակալման և առաջքաշնան չափանիշները**

Դասախոսական կազմի պաշտոնների տեղակալման և առաջքաշնան չափանիշներն են.

- հավակնորդի որակավորման մակարդակը,
- գիտական աստիճանը և գիտական կոչումը,
- մանկավարժական աշխատանքի ստաժը,
- ուսումնական, գիտահետազոտական, մեթոդական-կազմակերպչական գործունեության ձևերը և դրանց քանակական ցուցանիշները,

- ուսանողների կողմից դասախոսի աշխատանքի որակի գնահատումը,
- որակավորման բարձրացումը:
- 

## **5. Դասախոսական կազմի ծևավորումը**

5.1 Ֆակուլտետի դասախոսական կազմի տարակարգում պաշտոն գրադեցվում են մինչև 5 տարի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրերով:

5.2 Ֆակուլտետի դասախոսական կազմը համալրվում է հետևյալ կերպ.

5.2.1 թափուր պաշտոնների մրցութային եղանակով տեղակալնան կարգով.

5.2.2 պաշտոններում առաջքաշման կարգով՝ առանց մրցութային եղանակի

5.2.3 նշանակման կարգով.

5.2.4 աշխատողի՝ նախորդ աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումը դրական գնահատելու դեպքում նոր աշխատանքային պայմանագիր կնքելու կարգով:

## **6. Դասախոսական կազմի պաշտոնի տեղակալնան ընտրության կարգը**

6.1. Յուրաքանչյուր տարի՝ մարտ - ապրիլ ամիսներին, ուսումնագիտական աշխատանքների գծով պրոռեկտոր(ներ)ի և կադրերի բաժնի վարիչի կողմից ծևավորվում է հնստիտուտի դասախոսական կազմի հաստիքացուցակը (ըստ հնստիտուտում գործող կարգի) և ներկայացվում ռեկտորի հաստատմանը:

6.2. Դասախոսական կազմի բնական համալրման գործընթացն իրականացվում է տարին մեկ անգամ՝ մայիս-օգոստոս ամիսներին:

6.3 Հնստիտուտի դասախոսական կազմում աշխատանքի ընդունումը, աշխատողի և հնստիտուտի միջև աշխատանքային հարաբերություններն կարգավորվում են պայմանագրային հիմունքներով, որին նախորդում է պաշտոնի հավակնորդի մրցութային կարգով ընտրությունը: Մրցութային կարգով ընտրությունը չի կիրառվում աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետի երկարաձգման և մանկավարժական հատուկ տարակարգերը գրադեցնելու դեպքում:

Ֆակուլտետի դասախոսական տարակարգի պաշտոնում մրցութային կարգով ընտրված և միաժամանակ հնստիտուտի այլ ստորաբաժանումներում պաշտոններ գրադեցնող անձանց համար, այլ պաշտոններից ազատվելու դեպքում, պահպանվում է նրանց դասախոսական տարակարգն ընտրված ժամկետին և դրույքաչափին համապատասխան:

6.4. Աշխատանքային պայմանագիր կնքող կողմերն են.

- Ինստիտուտը (Գործառություն)՝ ի դեմս ռեկտորի,
- Ֆակուլտետի դասախոսական կազմում նշանակվող անձը (Աշխատող):

6.5. Աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու կապակցությամբ դասախոսական պաշտոն գրադեցնող անձը սահմանված կարգով ամբիոն է ներկայացնում հաշվետվություն՝ աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ: Հաշվետվության քննարկման արդյունքում ամբիոնը քվեարկությամբ (ձայների պարզ մեծամասնությամբ) ընդունած որոշումով առաջարկում է ռեկտորին.

ա) ակնառու հաջողությունների դեպքում՝ պաշտոնի առաջքաշման,

բ) որոշակի հաջողությունների, ձեռքբերումների, ինչպես նաև՝ աշխատանքի դրական գնահատման դեպքում՝ նույն պաշտոնում նոր պայմանագրի կնքման,

գ) թափուր տեղի համար մրցույթ հայտարարելու մասին:

Թափուր տեղի համար հայտարարություն տալու մասին որոշումը կայացնում է ռեկտորը՝ պրոռեկտորների հիմնավորմամբ:

6.6. Դասախոսական կազմի համալրումը և տարակարգումն իրականացնելու նպատակով՝

- 6.6.1. Ֆակուլտետի գիտառսումնամեթոդական խորհրդի որոշման հիման վրա ֆակուլտետի ղեկանի ներկայացմամբ ռեկտորի հրամանով ֆակուլտետի գիտառսումնամեթոդական խորհրդին կից ստեղծվում է մրցութային (նշանակումների) հանձնախումբ, որն ունի լիազոր ներկայացուցիչը հնստիտուտի մրցութային(նշանակումների) հանձնաժողովում:
- 6.7. Թափուր տեղերի վերաբերյալ մրցույթի հայտարարությունը հնստիտուտի ռեկտորատի կողմից տրվում է << բազմատպաքանակ թերթերում սույն կարգի 6.2 Ենթակետում նշված ժամկետներում: Հայտարարությունը նախապատրաստվում է ուսումնագիտական աշխատանքների պրոբեկտորների և կադրերի բաժնի վարիչի կողմից:
- 6.8. Թափուր պաշտոնատեղերի հավակնորդները հայտարարության մեջ նշված ժամկետում հնստիտուտ են ներկայացնում համապատասխան փաստաթղթեր Հավելված 1/: Հավակնորդներից պահանջվում են նաև դասախոսական տեքստեր և մասնագիտական առարկա(ներ)ից դասախոսությունների ներկայացում:
- Հակուլտետում աշխատող հավակնորդների համար պահանջվում են նաև մանկավարժական գործունեության գնահատման սոցիոլոգիական հարցման արդյունքները՝ ըստ հնստիտուտում ընդունված կանոնակարգի:
- 6.9. Հավակնորդների գործերը կենտրոնացվում են ուսումնագիտական աշխատանքների գծով պրոբեկտոր(ներ)ի մոտ:
- 6.10. Ռեկտորի (պրոբեկտորի) համապատասխան հանձնարարականով հավակնորդների գործերն ուղարկվում են ֆակուլտետի նշանակումների հանձնախումբ: Համաձայն «Վանաձորի Հովի.. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակեպության ֆակուլտետի կանոնակարգի 3.8.1. Կետի ֆակուլտետի գիտառսումնամեթոդական խորհուրդը անցկացնում է տվյալ ֆակուլտետում վերջին 2 տարվա ընթացքում առնվազն 0,75% բնօնվածություն ունեցած դասախոսների ընտրությունները:
- 6.11. Ֆակուլտետի նշանակումների հանձնախումբը հավակնորդների գործերը հանձնում է համապատասխան ամբիոն(ներ)ին, որտեղ 2 շաբաթվա ընթացքում կազմակերպվում է դրանց քննարկումը, և հանձնախումբ են ներկայացվում ամբիոնի կարծիքն ու որոշումը: Կարծիքում նշվում են հավակնորդի մասնագիտական բնութագիրը, գիտամանկավարժական գործունեության գնահատականը, քվեարկության արդյունքները և առաջարկված տարակարգում հավակնորդին երաշխավորելու հիմնավորումը:
- 6.12. Հանձնախումբը փաստաթղթերի հիման վրա 1 շաբաթվա ընթացքում տվյալ թափուր պաշտոնի յուրաքանչյուր հավակնորդի համար կազմում է եզրակացություն և ներկայացնում գիտառսումնամեթոդական խորհրդին՝ քննարկման: Եզրակացության ձևակերպումները պետք է լինեն հստակ և միարժեք: Հանձնախումբի անդամների տարակարծությունը պետք է արտահայտվի եզրակացության մեջ կամ առանձին փաստաթղթում:
- 6.13. Նշանակումների հանձնախումբի քննարկման ընթացքում կարևորվում են պաշտոնի հավակնորդի՝ ներկայացվող որակական չափանիշներին համապատասխանելիությունը.
- ա) որակավորման (ակադեմիական) աստիճանը և գիտական աստիճանը,
- բ) գիտամանկավարժական աշխատանքի ստաժը,
- գ) ուսումնական, գիտահետազոտական, մեթոդական-կազմակերպչական գործունեությունը, դրանց ցուցանիշները, ուսանողների կողմից դասախոսի աշխատանքի որակի գնահատման արդյունքները:
- 6.14. Հավակնորդն իրավունք ունի ծանոթանալու իր գործին առնչվող բոլոր փաստաթղթերին և դրանց քննարկման ընթացքում անհրաժեշտության դեպքում ներկայացնելու նորերը:
- 6.15. Համաձայն սույն կարգի 6.14 կետի դասախոսների պաշտոնատեղերի հավակնորդների մրցույթները (նոր պայմանագիր կնքելու վերաբերյալ առաջարկությունները) 2 շաբաթվա ընթացքում անցկացվում (քվեարկություն) են ֆակուլտետների գիտառսումնամեթոդական խորհուրդներում (փակ գաղտնի քվեարկությամբ): Քվեարկության արդյունքները

ֆակուլտետի դեկանի ներկայացմամբ բաց քվեարկությամբ հաստատվում են հնատիտուտի գիտական խորհրդի նիստում:

- 6.16. Փակ, գաղտնի քվեարկության համար մրցույթի բոլոր մասնակիցների ազգանունները այբբենական կարգով մտցվում են մեկ քվեաթերթիկի մեջ: Թեկնածության վերաբերյալ համաձայնությունը կամ մերժումը ներկայացվում է համապատասխանաբար «կողմ» կամ «դեմ» բառերի ջնջումով: Մնացած դեպքերում քվեաթերթիկը համարվում է անվավեր:
- 6.17. Զայները հաշվելու համար գիտառուսումնամեթոդական խորհրդությունից առաջ իր կազմից ընտրում է երեքից ոչ պակաս անդամներից կազմված հաշվիչ հանձնաժողով: Հաշվիչ հանձնաժողովը հրապարակում է յուրաքանչյուր թեկնածուի քվեարկության արդյունքը:
- Հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը հաստատվում է գիտառուսումնամեթոդական խորհրդությունը կողմից և կցվում մրցութային փաստաթղթերին:
- 6.18. Գիտառուսումնամեթոդական խորհրդի որոշումը համարվում է օրինական, եթե քվեարկությանը մասնակցել է խորհրդի կազմի 2/3-ը: Քվեարկվողը համարվում է մրցույթն անցած, եթե հավաքել է խորհրդի նիստին մասնակցող անդամների ծայների 50%-ից ավելին:
- 6.19. Գիտառուսումնամեթոդական խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել ռեկտորին՝ 7 օրվա ընթացքում:
- 6.20. Ռեկտորն իրավասու է երկշաբաթյան ժամկետում բեկանելու մրցույթն անցկացրած խորհրդի որոշումը, եթե կանոնակարգից շեղում է արձանագրվել և հայտարարել նոր մրցույթ:
- Մրցույթի արդյունքները կարող են չեղյալ հայտարարվել միայն սույն կանոնակարգը խախտելու դեպքում:
- 6.21. Մրցույթին դիմած անձինք կարող են մասնակցել գիտառուսումնամեթոդական խորհրդի նիստին, որտեղ քննարկվում է իրենց թեկնածությունը:
- 6.22. Երկու թեկնածուների կողմից 50-կան տոկոս ծայներ հավաքելու դեպքում նույն նիստում կազմակերպվում է կրկնակի քվեարկություն, որի արդյունքով ընտրված է համարվում 50 տոկոսից ավելի ծայներ հավաքած թեկնածուն:
- 6.23. Թեկնածուն իրավունք ունի ընտրությունից առաջ՝ հարցի քննարկման ընթացքում, հայտարարել ինքնաբացարկ:
- 6.24. Ինստիտուտի ռեկտորը, սույն կարգի համաձայն, հաստատում է դասախոսական թափուր պաշտոնի տեղակալման, պաշտոնում առաջքաշման և նոր պայմանագրի կնքման վերաբերյալ ընդունած որոշումները:

## 7. Պայմանագրի լուծման և փոփոխման հիմքերը

- 7.1. Աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը կարող է լուծվել կամ փոփոխվել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ

ռեկտոր, բ.գ.դ., պրոֆեսոր պարոն Գ.Կ.Խաչատրյանին

ամբիոնի ավանումը

գիտ. աստիճանը. կոչումը, անունը, ազգանունը

( \_\_\_\_\_ )

տան լրիվ հասցեն, հեռախոսը

Դիմում

Խնդրում եմ ինձ թույլատրել մասնակցելու \_\_\_\_\_ թ. \_\_\_\_\_ -ի

\_\_\_\_\_ -ին \_\_\_\_\_ թերթում Ձեր տնօրինության ներքո բուհի  
թերթի անվանումը

ամբիոնի գծով \_\_\_\_\_ թափուր պաշտոնում տեղակալման  
ամբիոնի անվանումը

համար հայտարարված մրցույթին:

Դիմումին կցում եմ հետևյալ փաստաթղթերը.

1. Կադրերի հաշվառնան անձնական թերթիկը,
2. Քաղվածք աշխատանքային գրքույկից,
3. Համառոտ ինքնակենսագրություն,
4. Գիտական (որակավորման) աստիճանը հաստատող փաստաթղթի պատճենը,
5. Տաղագրված գիտական և մեթոդական աշխատանքների ցուցակ (հավելված 2),
6. Տվյալներ պարզեատրումների, մրցանակների և պատվավոր կոչումների վերաբերյալ:

Դիմում

ստորագրություն

2012 թ.

Ուսնոթություն ՎՊՄ – ում աշխատող պաշտոնատեղի հավակնորդը չի  
ներկայացնում կկ. 2, 3, 4 – ում նշված փաստաթղթերը, իսկ  
5 – ում նշված փաստաթղթում ցույց է տալիս միայն նախորդ  
մրցույթից հետո (3 – 5 տարի) տպագրված աշխատանքները):